

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Փոփոխութիւն գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարձարացիք դիմում են ուղղակի

Требуют. Редакция „Меланс“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խառնաշաւիկ բառին 2 կոպէկ:

ՄԵԼԱՆ

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Այդ մի հանելուկ է.— Ն երբին տեսու-
թիւն, Նամակ Ներանդի, Ներքին լուրեր.— Ար-
տաքին տեսու թիւն: Հարստահարութիւն-
ներ Սեբաստիայի մէջ, Թիւրքիա: — Մշակիչ
հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Բանա-
սիրական: Մարդը գոյութեան կուի մէջ:

ԱՅՐԻ ՄԻ ՀԱՆՆԵԼՈՒԿ Է

Եթեանասուն տարուց աւելի է
որ Ռուսաստանը տիրապետում է
Կովկասեան և Անդրկովկասեան
երկրերը և այդ ամբողջ ժամանա-
կամիջոցում երկրի ամբողջ վա-
ճառականութիւնը, տէրութեան
կապալները, զօրքի հասցիները,
— բոլորը հայերի ձեռքումն է ե-
ղել.... Ահազին գումարներ ան-
ցել են հայերի ձեռքով, բայց
ի՞նչ ենք տեսնում.... Ամբողջ
Կովկասում և Անդրկովկասում մի
շատ հարուստ տուն չենք տես-
նում:

Մեր բոլոր հարուստ անուան-
ված կարողութիւններն էլ շատ
կասկածաւոր են: Եւ եթէ կան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԴԸ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒՒՒ ՄԵՋ

(Հարուստութիւն և վերջ)

Մինչև անգամ այն դէպքերում, երբ պետու-
թիւնները և մի քանի բնկերութիւններ գործ էին
դնում զանազան միջոցներ, որքան կարելի էր,
իրանց ստորագրեալ ժողովուրդների վիճակը բա-
րելաւորեցնելու համար, այդ նրանց ըստ մեծի
մասին չէր յաջողվում, գաղթականների և առ-
տիճանաւորների հակառակ ձգտումների պատ-
ճառով, այսինքն այսպիսի անձերի, որոնք զը-
տանվում էին անմիջական յարաբերութիւնների
մէջ «վայրենիների» հետ: Երկրագնդի զանազան
մասերում, օրինակ, արգելված է տանել ոգե-
ւոր ըմպիչներ, այն տեղերում, որ բնակեցրած
են զանազան նախնական ազգերով, որոնք աստ-
տիկ հակումն ունեն գէպի արեցութիւն. բայց
ոչ մի տեղ այդ կարգադրութեանը չեն նայում
տեղային եւրոպական վաճառականները: Տիրե-
լով Նոր-Ջուլանդիային, անգլիական կառավա-
րութիւնը, իր աշխատութիւնների մէջ, պահ-
պանել և զարգացնել տեղային բնակիչներին,
գտաւ գլխաւոր արգելքը ընդ զեղեղական ըն-
կերութեան կողմից, այսինքն մի բնկերութիւն,
որ կազմված էր հարուստ և ազդեցութիւն ու-
նեցող անգլիացիների ձեռքի տակ, որոնք չա-
փազանց անգութ կերպով հարստահարում էին
զեռ ևս այն ժամանակ բոլորովին անփորձ
մարտիներին, կարելի է բերել այդ մասին մեծ
քանակութիւն փաստերի:

Գրանից յետոյ «Вѣстникъ Европы» յօդուա-
ծի պ. հեղինակը բոլորովին անկողմնապահ կեր-

մի քանի ճշմարիտ հարուստ տը-
ներ, նրանց կարողութիւնը մի
հաստատ, ժառանգական ֆիրմա
երբէք չէ դառնում, երբէք հա-
րստութիւնը մեղանում երկու սե-
րունդից աւելի չէ տեսնում.... Եր-
բորդ սերունդին հասած կարողու-
թիւնը անպատճառ փչանում է, և
վաւերվում է, անհետանում է....

Հայերի մասին, առհասարակ,
ասում են թէ նրանք տնտեսա-
կան ընդունակ ժողովուրդ են:
Բայց ինչով բացատրել այդ ան-
ընդունակութիւնը երկու սերուն-
դից աւելի հարստութիւնը պա-
հելու....

Այդ մի տնտեսական հանե-
լուկ է:

Մեր կարծիքով այդ հանելուկը
շատ հեշտ է լուծվում:

Հայերը ընդունակութիւն ու-
նեն միմիայն դիզելու հարստու-
թիւնները և ոչ թէ պահելու և
կառավարելու դիզված կարողու-
թիւնը: Եւ այն միջոցներն էլ
որ նրանք գործ են դնում հարս-
տանալու համար հաստատ, տըն-

պով առաջ է բերում մի փաստ, թէ որպէս զա-
նազան հարստահարիչ ռուսներ, հակառակ կա-
ռավարութեան բարի նպատակներին, վարվում
են կալմիկների հետ, «Իրուսաց կառավարու-
թիւնը» — ասում է նա — կալմիկների ժողովուրդի
բարօրութեան նկատմամբ, մտածեց հնարների
մի ամբողջ շարք, այն նպատակով, որ վարձեցնէ
նրանց երկրագործութեան և աւելի կանոնաւոր
տնտեսութեան մէջ: Գրա համար կարգադրվե-
ցաւ կտրել վճարայի բոլոր մերձակայքում գտն-
վող կալմիկեան անապատը ընթացիկ ճանա-
պարհներով և հիմնել նրանց մօտ փոքրիկ գիւ-
ղեր (կալմիկների համար): Ի՞նչ եղաւ դրա հե-
տեանքը: Այն, որ շատ ճանապարհներ չը յայտն-
վեցան, որքան կարծվում էր, և բացի գրանից,
բոլոր գաղթաչները ընկան ամբողջապէս ռուս-
ների ձեռքը, և այսպէսով, երկրի եղբայրներ
(Осраиан) յայտնվեցաւ բաւական բազմաթիւ
ռուսների բնակութիւն, որոնք իրանց բոլոր
յարաբերութիւնների մէջ թշնամի են կալմիկե-
րին, իսկ դրանք վերջապէս կորցրին իրանց լա-
հողերի մեծ մասը, և առհասարակ մօտեցան
կատարեալ աղքատութեան:

Քննելով այստեղ հարցի այն կողմը, որ վերա-
բերում է զօրաւոր և տկար ժողովուրդների մի-
մեանց հետ ունեցած յարաբերութիւններին
գոյութեան կուրի մէջ, չէ կարելի փոքր ինչ
չը չեղվել զխաւոր հարցից, թէ ևս զա՛յունէ ուղ-
ղակի վերաբերութիւն մեր այժմ քննած խնդ-
րի հետ, բայց կարող է պարզել մի քանի միու-
թիւններ: Կարծիքները, — պետութիւնների գործ
դնելու միջոցների մասին իրանց հոգաբարձու-
թեան տակ գտնված նախնական ժողովուրդնե-
րի վերաբերութեամբ, կամ առհասարակ փոքր
ազգութիւնների վերաբերութեամբ, — խիստ տար-
բեր են: Նրանց կարելի է բաժանել երեք մասն:
Ոմանք հարկաւոր են համարում, որպէս և իցէ,
պահպանել այդ ժողովուրդները, չը խնայել ա-
մեն կերպ ծախսեր, որ գոնէ, որքան կարելի է,
բարձրանան նրանք և քաղաքակրթվեն, ժողո-

տեսական խիստ կանոնների վրա
չեն կայանում, աշխատանքի և
արդիւնագործութեան վրա չեն
հիմնվում, այլ բազդի և ճարպի-
կութեան վրա....

Առհասարակ տնտեսական որ
և է գործունէութեան մէջ աջո-
ղութիւն ունենալու համար ճար-
պիկութիւնը բաւական չէ. պէտք
է գլխաւորապէս ձեռնարկական
հաստատ ոգի, պէտք է ճիշդ հա-
շիւ, պէտք է երկրի տնտեսական
պահանջների հետ կատարեալ
ծանօթութիւն: Բայց այդ յատ-
կութիւնները չունի հայը, գոնէ
հայերի այժմեան սերունդը այդ
յատկութիւնները չունի:

Հաշեցէք մի առ մի բոլոր
հարուստ հայ տները, — և դուք
կը համոզվէք որ նրանցից ոչ
միւնը չէ հարստացել երկրի մէջ
հիմնված տնտեսական, օգտուէտ
տնտեսութեամբ, կանոնաւոր որ
և է արդիւնագործութեամբ....
Ոչ, բոլորն էլ հարստացել են ան-
կանօն կերպով, պատահական
միջոցներով, որոնք բոլորովին

վրդագրները (Этнографы), որոնք աւելի ծա-
նօթ են նախնական ազգերի հետ, բոլորովին
պաշտպանում են այդ կարծիքը: Ահա, օրինակ,
որպէս է խօսում այդ մասին Հերլանդ իր չա-
րագրութեան վերջին տողերում «Նախնական
ժողովուրդների սպառման մասին» — «Քոթղ պահ-
պանվի այդ ժողովուրդներին այն, ինչ որ դեռ
ևս կարող է պահպանվել, Մինչև այժմ եղած
մարդկային զարգացումը և դրանց վերաբերու-
թեամբ կատարելապէս կախումն ունի բնական
օրէնքից: Գոյութեան կուրը, որի մէջ զօրաւորը
նա է, որ յաղթում է, երևան է գալիս իր կա-
տարեալ չափով: Ամբողջոված ցեղերը տա-
րածվում են ուժով և բաւականութեամբ, և ա-
ռանց որ և իցէ հարկաւորութեան, ոչնչացնում
են իրանց յաղթած տկար ցեղերին: Բայց մարդը
ընդունակ է դատելու և սիրելու. այդ իսկ
պատճառով պէտք է խելացի ցեղի զօրաւոր
անդամը ցոյց տայ իր ուժը այն բանի մէջ, որ
աշխատէ սիրով բարձրացնել մինչև ինքը իր
յաղթած ցեղի տկար անդամներին: Այդ գէպ-
քում միայն կը տիրէ հոգու և բարոյական
ընտրութեան իշխանութիւնը, և ամբողջ մարդ-
կութիւնը կանչը մի մեծ քայլ դէպ առաջ, այն
ճանապարհով, որին նա պէտք է դր հետեւի,
այսինքն հոգու ազատութեան ճանապարհով
արտաքին բնութեան կոպիտ կապալներէն:»
Հերլանդը և առհասարակ կարծիքների այն
մասը, որոնց նա թարգման է հանդիսանում,
հիմնվում են վերջի վերջոյ այն համոզմունքի
վրա, թէ հարկաւոր է խնամք տանել և պահ-
պանել ամբողջ մարդկային սեռը իր բազմաթիւ
տեսակների մէջ:

Երկրորդ մասի կարծիքները, որոնք առաջինի
հետ համեմատելով բոլորովին հակառակ բնա-
ւորութիւն են կրում, նոյնպէս ի նկատի ունեն
մարդկային ընդհանուր բարին: Բայց նրանց
հայեացքը կէտից նախնական ժողովուրդների
պահպանութեան համար գործ դնել զանազան
արհեստական միջոցներ, որոնք արժեն անպիսի

զուրա են երկրի հետ սերտ կապ
ունեցող կանոնաւոր տնտեսական
արդիւնագործութեան:

Իսկ պարզ է որ անկանօն, ան-
հաշիւ, բազդի բերմունքով հարս-
տացածը չէ էլ կարող կանոնա-
ւոր, խելացի կերպով կառավարել
ձեռք բերած կարողութիւնը:

Ուրեմն հանելուկը հեշտ է
լուծվում.... Մինչև որ հայը կը
հարստանայ անկանօն, թէ և հեշտ
կերպով, նա նոյնքան հեշտու-
թեամբ կը վաւերի էլ իր ամբողջ
հարստութիւնը:

Մենք չունենք կանոնաւոր,
հաշված տնտեսական գործու-
նէութեան վրա հիմնված հարս-
տութիւնները. մեր հարստութիւն-
ները քամին բերում է և քամին
էլ շուտով տանում է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

23 հոկտեմբերի

Մի օր գնացել էի Աշտարակ գիւղը. խմբագ-
րու ժամանակ նկատեցի, որ մի երեխայ աջ

ծախսերի, այսպիսով նրանց գոյութեանը նպաս-
տել անկարելի են համարում: Արդեօք կարող
են այդ ցեղերի ներկայացուցիչները բարձ-
րանալ մինչև այժմեան կրթութեան մակե-
րեցիքը, այդ դեռ ապացուցված չէ և մի
քանի դէպքերում խիստ տարակուսական են
համարում Բացի դրանից, թողնելով մեծ մասը
ամենահարուստ և արգաւանդ երկրների նախ-
նական բնիկների ձեռքում, և արգելելով եւ-
րոպական գաղթականների նրանց մէջ մո-
տենել: — Համարում են մի մեծ միտք վերջինների
համար, որը մի նշանաւոր օգուտ չէր բերելու
առաջիններին: Հասարակ հաշիւը ցոյց է տալիս,
որ այդ երկրները կարող են կերպարել անհա-
մեմատ մեծ թիւով կրթված եւրոպացիներ. քան
դեռ ևս երկրագործական աստիճանին չը հա-
սած, նախնական ժողովուրդներին: Այստեղից
հետեւեցնում են, թէ նախնական ազգերին ար-
հեստական եղանակով պահպանել կարող է կա-
տարվել ոչ այլ նպատակով, բայց միայն նրանց
երկրներում բնակվող եւրոպացիներին ծառայելու
համար, և այդ կը լինի փոքրամասնութեան
պահպանութիւնը մեծամասնութեան համար, Եւ
այդ պատճառով հարկաւոր են համարում թող-
նել, որ գոյութեան կուրը յառաջ գնար իր բը-
նական ընթացքով, և արգելք չը դնել քաղա-
քակրթված եւրոպացուն ճնշելու կամ իրանց
երկրից արտաքսելու նախնական տեղացիներին:
Այժմեան գիտնական հեղինակները այսպիսի
գաղափարները պաշտպանում է, օրինակ,
Հերլանդը, որպէս այդ երևում է նրա հետեւեալ
նկատողութիւնից նեղրների ոչնչանալու մասին
Միացեալ Նահանգներում. «ազատ նեղրների
ոչնչանալը ներկայացնում է հիմնականից մե-
ծանակի հարց — ասում է նա — և տալիս է ժեկը
այն ամենակարեւոր վաճառանքից, որը խիստ
հիմնաւոր և չափազանց բարեյաջող է: Վերջա-
պէս դա մի պայման է, որով միանգամով և
մշտապէս ազատված կը լինենք «տեղացիներ-
ին» հոգսերից. կրթութիւնը կը տօնէ իր այդ

ձեռքը դրած աչքերի վրա, լաց է լինում և հայհոյում ու ետ—ետ մտիկ տալով փախչում։ Ունի է հայհոյում արդեօք. հարցրի հետի մարդուն—
—Տէր—Սարգսին է հայհոյում, աղաւ—
—Մեր գիւղումը շատ աչքացաւ կայ, տէր—
տէրը գնացել է Երևան, այնտեղից ջրի պէս մի
զատ է բերել. ում որ չի տեսնում որ աչքա-
ցաւ ունի, հէնց այն սնաթիւն վաղում բռնում
է, զօրով աչքերն է ածում այն ջրիցն ու բաց
թողում։—Յետոյ—Մի քանի անգամ ածում է,
լուացնում է։—Բախնէն են խեղճին հայհոյում,
—Գէ երեխեք են, խեղճներուն բան չի կտրում.
—Մեծերը գոնէ չորհանկալ են տէր—տէրիցը։
—Մեր մարդը, աղա, չորհանկալութիւն անել չը
գիտէ. մենք, աշտարակից մի բան գիտենք
միայն.—բաժանել ու հայհոյել։—Տէր—տէրը ջա-
հել մարդ է, թէ ծեր։—Յիսուսից աւել կը լինի
ու պակաս չէ։ Զէն, ինքն էլ գալիս է։ Ետ
նայելի և տեսալ որ մի միջանասալ, կէս սպի-
տակամորդ քահանայ, գաւազանը ձեռքին,
կամրիւնքին գլխին դէպի ինձ է գալիս. ես մը-
տաբերեցի որ քանի մի տարի առաջ տէր հօր
հետ ծանօթացել եմ իջմիծնում, ուստի ոտս
կախ—ձգեցի, տէր—տէրը հասաւ։—Բարի ող-
ջոյն ձեզ, աղա, ինչպէս էք... Սօրհնեմ ի տէր,
զուր ինչպէս էք տէր—հայր ջան...—Էհ, լաւ-
օտալ կառավարվում ենք էլի... համեցէք աղա,
գնանք մեր տունը, մի քիչ հանգստացէք, նոր
էք գալիս, բերած կըլէք... Տէր տէր ջան
Նիքիւմ Մակարիչն արդէն սպասում է ինձ, գնանք
նրանց մօտ։ Լաւ, մի և նոյն է, այնտեղ գնանք.
մենք գնացինք։—Տէր—տէր, Աշտարակը քանի
տուն է, հարցրի ես փոքր ինչ նստելուց յետոյ.
400 տուն է աղա—Փանի եկեղեցի ունէր։—
2-ն ունենք, մէկն էլ չի ունէր։—Ուսումնա-
րան.—Նիքիւ չի ունէր, մէկը աղվանց
համար, միւսն էլ աղալոց, բայց համարեա թէ
փակված է։—Ինչո՞ւ։—Գէ մէկերնում մարդ
չը կայ, միւսին չը կայ. ոչ ոք էլ գլուխ չէ
տանում որ վարժապետ ու վարժուհի վարձեն.
մի քանի հազար մանկէ ինչ ունենք հաւաքած,
այն էլ քոս ու փուշ ըլաւ, որը քա կերաւ, որը
նա կերաւ, որն էլ հիմի ում ձեռքն որ է, ետ
չի տալիս, ասում է էս էլ իմ փայն է... Վիսոս,
ախսոս որ ուսումնարանի վրա այդպէս էք նա-
յում. չորս հարիւր տուն և առանց ուսումնա-
րանի, Բախնէն չէք քարոզում որ համաձայն-
վեն, վարժապետ բերեն։—Էհ, կոտորվեն սրանք,
սրանք քարոզել կը լինի. ամեն մէկը մի եպիս-
կոպոսից լաւ քարոզ գիտէ. ես սրանց ինչ սո-

վորեցնեմ, միթա՞մ չը գիտէն որ ուսումնարանը
լաւ բան է, բայց փող չեն ուզում տալ.
վարժուհուն էլ ես եմ իմ տանը իմ հացով
պահում.—Հինգ քահանայ էք, որ տեսնում էք
վարժապետ չէ բերում ժողովուրդը, դուք գոնէ
դաս տուէք. մի բան կը սորվեցնէք, վարժք է
ձեր հոգուն։—Այ քէ դուք բան, մենք ինչ գի-
տենք որ ինչ դաս տանք. մի մաշտոց ու շարա-
կան լոկ կարգաւով մարդ կարող է վարժապետ
լինել. ուսումնարան չենք մտել, ուսում չենք ա-
ռել։—Բա ինչու չեն ձեր Նիքիւն տէր տէրերն
էլ ուսումնարան պահում ու դաս տալի. նրանք
հօ քաղաքի տէր—տէրեր են, աւելի լաւ
կրմանաւ...—Ինչպէս չեն դաս տալիս. այ տէր
վահանը հայոց լեզու է դաս տալիս, տէր Գրի-
գորը ձայնագրութիւն, տէր—Յովսէփը դաս է
տալիս հայոց լեզու, կրօն և տեսուչ է։—Տէր
Յովսէփը քրտեղի տեսուչն է, աղա ջան, ամօթ
չը լինի հարցնելը։—Գալանեան օրնորդական
գալորդի տեսուչն է։—Այդ գալորդում ինչ ու ինչ
են սովորեցնում, աղա։—Սորվեցնում են հայոց և
ուսուցաց լեզու, թուաբանութիւն, հայոց և ընդ-
հանուր և Ռուսաստանի աշխարհագրութիւն, բը-
նական պատմութիւն, կրօն և սրբազան պատ-
մութիւն, ձայնագրութիւն, ձեռագրութիւն,
նկարչութիւն և վայելչագրութիւններ. հայոց և
ուսուցաց ու վերջապէս պարել։—Հա, ես ու իմ
Աստուածը լաւ բոլ բան են սորվեցնում. բայց
մի բան հարցնեմ, ամօթ չը լինի հարցնելը, ա-
ղա ջան, այդ տէր Յովսէփին ես ճանաչում եմ,
Մեքորմը և Գրիգոր եպիսկոպոսների մօտ շատ
եմ տեսել. նա էլ ինձ պէս մաշտոցից ու շա-
րականից դուրս ուրիշ բան չի սովորել, արդեօք
ոնց է իմանում թէ այդ առարկաները դաս
տուղները լաւ են դաս տալիս թէ վատ, սուտ
են խօսում թէ զորոք...

Բարդի բան է, աղա ջան, ես էլ նրանից պո-
կաս չեմ, ամա էնքան աշխատեցի որ մի ալդ-
պիսի պաշտօն էլ ինձ տան, բայց մեր Շուրիով
գլխիս կարաբաղին կարողաց, ասում է. տէր-
տէր, ամօթ է քեզ համար, ի դուր տեղը մի աշ-
խատիք, տեսուչ լինողը պէտք է ինքը սովորած
լինի այն ամեն բաները, ինչ որ ուսումնարա-
նում սովորեցնում են. պէտք է գիտենայ նոյն-
պէս նոր ձեռք սորվեցնելու հնարքներ։ Տօ ջանմ,
բա ինչի չեն տէր Յովսէփին էլ այդ բաները
պահանջում. այ ինչ կը նշանակի Սիւնոզի միծ-
մեծ անդամների հետ բարեկամ լինելը, կոտոր-
վեն մեր աշտարակիցը, օրհնվեն ձեր երևանցիք.
—Այո, մեր երևանցիք մարդու աշխատանք գնա-

հատող են. տէր Յովսէփը 10 տարի է որ տե-
սուչ է և բացի դրանից մեզ համար թատրոն էլ
չի կաց։—Գէ դուք բան, այս փուշ աշտարակիցը որ
ձեր երևանցիների պէս լինեն, որ փուշ տան ու
հաշիւ չը պահանջեն, որ թողնեն ես ինքս ինձ
համար ուժիկ նշանակեմ, և իմ ուզած մարդիկը
պահեմ, նրա պէս ես էլ տասը չէ որ քսան տա-
րի էլ տեսուչ կը լինեմ. մէկ էլ որ եղած փո-
ղից մի հազար հինգ հարիւր բուրլի վերցնել ու
բեմ չի ելել, այնքան դժուար բան չէ, ինչքան
որ առանց ուսումի տեսուչ լինելը, ինձ դար-
մացնող այս վերջինն է։

Այս խօսակցութեան մէջն էր տէր—Սարգսին,
մէկ էլ տեսնեմ երկու երեխայ բերին. մէկը ջեր-
մում էր, միւսի աչքերը ցաւում էին։ Նիքիւ-
նեքին բերող կանայքը գնացին Նիքիւմ Մակա-
րիչի կնոջ մօտ և առ, որ բաւականին հնուա էր
կանգնած տէր—տէրից, կանչեց. «տէր—տէր ջան,
տէր—տէր, մի ջախա քաշիք այդ երեխի ղողը կը-
տրի և սքա էլ աչքը դեղ ձգիք»։—Նիքիւ, եկէք
տեսնեմ. Ջերմող երեխան մի քիչ բարձրակ էր
բերել հետը։ Տէր—տէրը բամբակը առաւ և սկսեց
մատնելով ուրիշ ու թել քաշել, մտքի մէջ ա-
ղօթք անելով։ Պրծնելուց յետոյ կայացեց այդ
թելով երեխայի աջ դաստակը և ասաց. «գէշ փա-
խի, հիմի կը կտրիլ դուք Երևան կանչեց միւս
երեխային, աչքի կողմեր յետ ծակեց հանեց իր
գրպանից մի չիշ և նրա միջի հեղուկով թրջեց
ու կողմերը կրկին դարձրուց. դէհ գնա, միւս էլ
էգուց արի»։—Այդ ինչ է, տէր—հայր, խնդրեմ
ցոյց տաք. տեսալ որ կապարի ջուր է։—Նիքիւ
բուրլու բերել էի. հատարել եմ. բայց 30-ից
աւելի երեխայի աչքեր եմ բժշկել։ Տեսուչ չը
կարողացանք դառնալ, բժիշկ էլ ա դառնանք.
ասաց ու ծիծաղեց տէր—հայրը։—Տէր—հայր, միթէ
այդ հնարքով դողից ազատվում են։—Հաւատա-
ցողները միշտ ազատվում են։ Հաց Եստեղուց
յետոյ դուրս եկալ տէր—տէրի հետ գիւղամէջ.
Գիւղամէջում մարդիկ ժողովված վարժապետ
վարձելու վրա էին խօսում. Մէկը, որ ուզում
էր իր երկու աղջկանին 600 բուրլ նշանակել
տայ կամենալով միւսներին համոզել որ էօան
է, ասում էր. «տօ ձեր տունը չը քանդվի, իմ
ք ու իս աք ու լն չէ տարի 600 բուրլուց աւելի
է աշխատել. բա էս երկու հոգին, մարդ ու կը-
նիկ, 600 բուրլ չարժեն»։—Չը կարողանալով ծի-
ծաղս բռնել, տէր—տէրին բարեաւ մնաս ասեցի
ու վերադարձաւ։ Այժմ լսում եմ որ աշտարակ-
ցիք համաձայնվել են միմեանաւ 300 բուրլ, տուն,
ծառայ ու վառելիքայտ տալ արքունի երկու

դասարանաւոր մի դպրոցի համար, որը շուտով
կունենան։

Մի այսպիսի դպրոց էլ Նիքիւն է բացվելու.
Ջայն կայ որ Նիքիւնում էլ մի այդպիսին շուտ
կը բացվի։ Նիքիւնին մօտիկ 4—5 մեծամեծ
թուղթախօս հայ գիւղեր կան, որոնց բնակիչները
29 թիւն գաղթել են Պարսկաստանից. սրանց
տէր—տէրերն էլ են թուրքերէն խօսում. մինչև
հիմա, լսում ենք որ այդ գիւղացիք ես խնդրել
են արքունի տեսչի օգնականին որ երկդասա-
րանաւոր դպրոցներ բացվեն իրանց գիւղերում.
Չը գիտեմ, հոգեւոր իշխանութիւնը դրանց տեղը
գիտէ արդեօք, թէ ոչ։

Ես ձեզ հաղորդել էի որ տեղոյս օրնորդաց
դպրոցի հանդիսի մէջ ժողովուրդը խնդրեց ա-
ռաջնորդից որ հոգաբարձուհիների ընտրութիւն
լինի։ Առաջնորդը խօստացաւ, բայց չը կարողա-
ցաւ իր խոստումը կատարել. Չը նայելով որ
խեղճ մարդը երկու անգամ հրաման գրեց բարե-
կարգին որ եկեղեցիցների մէջ ծանուցում լինի.
բայց ծանուցումն չէր եղած այնպէս, ինչպէս
որ հարկաւորն էր. այսինքն ծանուցման մէջ
պէտք է ասուէր ն որ ընտրութիւն պիտի լինի,
ասուած էր. հն երբ պիտի մնան և պակասը
պէտք է լրացնվի. Անցեալ կիրակի մի հինգ-
վեց մարդ էին եկել ժողովի մէջ, որոնք խընդ-
րեցին առաջնորդին որ պարզ գէ թէ նոր ըն-
տրութիւն պիտի լինի. բայց դե պատասխանեց
թէ այդ բանը չէ կարող գրել. Տէր Յովսէփը
համաձայն չէ և կրկին իր հրամանը հանել թիւր
լրացնելու մտքով։ Տէր—Յովսէփն էլ գնաց էլ-
միածին ու եկաւ և տարածեց թէ վեհափառին
ընդգէմ է նոր ընտրութիւնը. ուստի այս կի-
րակի էլ որ պէտք է կրկին ժողով լինէր, բացի
ինձանից և առաջնորդից ոչ ոք չէր եկել. չը գա-
լու պատճառը քննութեան կը կարօտի։ Մեր
ժամանակը Տէր—Յովսէփի ժամանակ է. կեցցէ
անտարբերութիւնը։

Հին—Բարեկամ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարող ենք յայտնել մեր ընթերցողներին որ
Արծրունու գաղթելու չի վերա թատրոնական
զահլիսի պլանը արդէն ներկայացրած է Թիֆ-
լիսի քաղաքային ուղարկային հաստատութեանը.
Դահլիճի յիշուածները երեք շուտով սկսվելու է։

հետադատութիւնը, ըստ երևոյթին, ունի բաւա-
կան նմանութիւն Բօկլի նշանաւոր կարծիքի
հետ, թէ որպէս գոյութեան կռիւի մէջ, նոյնպէս
և առհասարակ քաղաքակրթութեան գործում,
իրեն վճռական և ամենադիւրեւոր ուժ, յայտնա-
վում է միշտ մտաւոր դարգացումը, և որի ընդ-
հակառակն, բարոյական գործութեան դերը ան-
համեմատ աւելի սահմանափակված և ընկճված
է լինում։ Մենք չէինք կարող այդ տխուր ճշ-
մարտութիւնը երևան չը հանել, քանի որ մը-
ցութեան մէջ յայտնված փաստերը ուղղակի
ցոյց են տալիս նրան։ Մենք, թէ ես այն չկողային
չենք պատկանում, որ համաձայնվենք Բօկլի հետ,
թէ բարոյական սկզբունքները տանում են մար-
դուն դէպի կատարեալ անշարժութիւն.—բայց մի
և նոյն ժամանակ չենք էլ կարող թաղցնել մեր
խորին ցաւակցութիւնը, որ աղգերի գործնական
կեանքի մէջ բարոյականութիւնը չէ պայմանա-
ւորվում մարդկային ձգտումների հետ, անբարո-
յականը, անխիղճը, անգութը, իր շահերի համար
ուրիշներին խեղդող միշտ առաջ է գնում և
յաղթող է հանդիսանում, և բարոյականութիւնը
մնում է որպէս մի իդէալական երաց։

Ուրեմն, կրկին յիշելով Մակարիւնի խօսքը,
կասենք, երբ մի անհատ կամ մի աղջ ցանկա-
նում է չոչնչանալ գոյութեան կռիւի մէջ, նա
պէտք է «իր գործունէութեան ձեռքը փոփոխէ
ժամանակի և հանգամանքների համեմատ».
և այդ կատարել չէ կարող նա, քանի որ չէ ճանա-
չում ժամանակի պահանջները և նրանց հետ
յարմարվելու ընդունակ չէ. իսկ պահանջները
ճանաչելու և նրանց յարմարվելու համար պէտք
է ժամանակի քաղաքակրթութեան համեմատ
զարգացած լինել։ Իսկ որ ժամանակի հետ չէ
ընթանում, նրան կը տիրէ անշարժութիւնը.—
այստեղ է հանում աղգերի մահը։

Մէկը գրաւէ

յաղթութիւնը, որը միշտ կապված է այլանեւ
տարրերի կորչելու հետ։

Ներքոյ մասի կարծիքները նոյնպէս ընդհա-
նուր մարդասիրական նպատակ ունեն. նրանք
մտածում են, թէ փոքր ազգութիւնների կամ
ցեղերի գոյութիւնը, մարդկային ընկերութեան
մէջ, նշանակութիւն չունի, թէ նրանք պէտք է
կանգնեն և ձուլվեն ազգային մեծ խումբերի
հետ, և մի ամբողջութիւն կազմեն։ Նրանց ան-
ընդունակ են համարում ինքնուրոյն կերպով
քաղաքակրթվելու, կամ երկրաբանի վրա ան-
կան ու ազատ դիրք բռնելու, և այս պատճա-
ռով աւելի լաւ են համարում կամ նրանց ոչն-
չանալը և կամ մի մեծ խումբի հետ խառնվելը,
որ մարդկային յառաջագիւղութեանը արգելք չը
լինեն... Այդ նպատակին ձգտում են (թէ եւ քա-
ղաքակրթութեան քոչի տակ) մարդկային այն
մեծ խումբերը, որոնք, գոյութեան կռիւի մէջ ֆի-
զիքական ուժը—մեծ թիւով պատերազմող ձեռ-
քերը—ամենապլանաւոր գործող գործութիւն հա-
մարելով, ցանկանում են կազմել մի քաղաքա-
կան մեծ և միասնական մարմին, որ ամբողջու-
թիւն ունենար։

Անն այդպէս, գոյութեան կռիւի մէջ, բոլոր
գաղաւթի նպատակները, որոնք ծառայում են ա-
ռանձին հասարակութիւնների շահերին միայն,
կատարվում են քաղաքակրթութեան և ընդհա-
նուր մարդասիրութեան անունով։ Որին պէտք
է իրաւասութիւն տալ։

Եւ ինչ որոշ վճիռ մեր հետադատած հարցի
մասին տալ չենք կարող. կը թողնենք ընթեր-
ցողին իրան մտածել. Խոսեցաք (ժողովրդա-
գէտ)—այդ մարդկութեան բարեկամը, որ ամե-
նից աւելի մօտ կերպով ծանօթ է ցեղերի և
նախնական ժողովրդների բնաւորութեանը ու
սովորութիւններին.—պնդում է նրանց պահպան-
վելու մասին, և առհասարակ թեքվում է դէպի
նրանց օգտի կողմը։ Իսկ տնտեսագէտը,—որ
աւելի հակում ունի դէպի քաղթականների շա-
հերը, որոնք ճնշված են լինում իրանց խիտ բը-

նակեցրած հայրենիքում մրցութեան ծանր պայ-
մաններից,—կը սկսէ, ի հարկէ, պաշտպանել վեր-
ջիններին, որ ազատութիւն տրվի նրանց բնակ-
վելու որտեղ որ ցանկանում են, և պատերազմ-
մեկ սպառնալու, ոչնչացնելու անկրթ համարված
վայրենիքներին։ Միսթօնարը կը միանայ աւելի
չուտով էտնօգրաֆի կարծիքի հետ, իսկ գործ-
նական մարդը կը կանգնէ տնտեսագէտի կողմը։
Իսկ պ ա տ ի ռ ի Օ տ ը, որ աւելի դարբին-արհես-
տաւորի աչքով է նայում մարդկութեան վրա,
չի ցանկանալ փոքր ազգութիւնների կամ ցե-
ղերի ոչնչանալը, այլ որպէս իր արհեստանոցի
համար պատրաստի նիւթ, կը ցանկանայ նրանց
ձուլել և իր կաղապարի մէջ մի նոր ձև տալ. և
մի ամբողջ մարմին կազմել.—ի հարկէ, այն աղ-
գի ամբողջը, որին ինքն է պատկանում. իսկ
բն ա զ է տ ը, մեր կարծիքով, բոլորովին կը հե-
ռացնէ իրան, նա չի ձանձրացնի իրան վճռելու
մի դժուարին հարց, նրա նման, որպէս պատա-
լօղ-անաստմը կամ ֆիլիսթօղը ըստ մեծի մասին
հրաժարվում են բժշկել հիւանդներին կը պետու-
թիւնների մէջ, այս և այն տարբերքի, այս և այն
կուսակցութիւնների միմեանց վրա ունեցած
փոփոխակի գերազանցութիւնը կարող է սաս-
տիկ ազդել կառավարութիւնների ձեռք առած
միջոցների վրա.—և նայելով հանգամանքներին,
գործի իսկութիւնը կամ կենթադրվի նրանց և
կամ խոյս կը տայ... և այն ժամանակ գոյու-
թեան կռիւը կամ ուղղակի և կամ կողմնակի
ճանապարհներով կը հասցնէ գործը մինչև այն
աստիճանի, որ գորաւորները կիշխեն տղաքների
վրա, և այն ժողովուրդները, որ ընդունակ չեն
տանել մրցութեան ճնշմանը.—կը կորչեն։

Կրկին վերադառնալով այն հարցին, թէ որ-
պիսի բարձրագոյնակ ուժեր գեր են խաղում գո-
յութեան կռիւի մէջ, մենք հարկաւոր ենք հա-
մարում յայտնել ընդհանուր կ ա ն ո ը ը
կենդանի բնութեան, որի համեմատ յաղթու-
թիւնը չարվում է մարդու մրցութեան պայման-
ներին ընդունակ լինելով։ «Եթէ մենք կը

կ ա ռ ո ղ ա ն ա ն ք.—ասաց Մակարիւն.— փ ո լ
փ ո լ մ ի մ ե Ր գ ո Ր ծ ու Ն է ու թ է ա ն ձ ե-
ւ և ե Ր ծ ժ մ մ ա ն ա կ ի և հ ա ն դ ա մ ա ն ք ն ե-
ր ի հ ա մ մ ա տ, ա յ ի և բ ա ղ ը մ մ ձ զ չ ի
խ ա բ ը ի»։ Այդ փիլիսոփայական կանոնի մէջ ա-
ռաջին պայմանն է՝ այդ հանգամանքների ճա-
նաչելը և ապա նրանց յարմարվել գիտենալը և
նրանցից օգուտ քաղելը։ Այդ կանոնը ճիշդ է,
որպէս երկու առանձին անձերի մրցութեան
դէպքերում, նոյնպէս և ժողովուրդների կամ ազ-
գերի միմեանց հետ ունեցած մրցութեան գոր-
ծում։ Այս պատճառով կարելի է ենթադրել, որ
այն ազգերը, որոնք աւելի վարժված են իրանց
ներքին մրցութիւնների մէջ, կը յայտնվեն ա-
ւելի ևս զօրաւոր և օտար ազգերի հետ զարկ-
վելու միջոցներում։ Եթէ այդ ուղիղ է, ուրեմն
և այն ենթադրութիւնները, որ յայտնվեցան նա-
խընթաց գրականներում անհատական մրցութեան
վերաբերութեամբ, պէտք է ասարկվեն և ժողո-
վուրդների ու ազգերի մէջ եղած մրցութեան ե-
րեւոյթների վրա։

Այդ մասին բաւական է, որպէս օրինակ, վեր-
առնել մի աղջ միայն, անգլիացիքը. վաճա-
ռականական և արհեստագործական մրցութիւնը
սաստիկ զարգացած է ամեն մի անգլիացու
իրանց մէջ, և տարածվելով ամբողջ ազգի ան-
դամների վրա, նոյնը և աւելի սաստիկ գորու-
թեամբ նրանք գործ են դնում և օտար ժողո-
վուրդների հետ։ Իսկ վաճառականական բարո-
յականութեան սե կողմերը յայտնի են մեզ
Սպանիայի նկատողութիւններից. նա որպէս ա-
ռանձին անհատների մէջ, նոյնպէս և վաճառա-
կանութեամբ պարագլուղ մի ամբողջ ազգի մէջ
նոյնն է լինում։ Ուրեմն պէտք չէ զարմանալ,
որ անգլիացին ամբողջ երկրագնդի վրա յայտն-
վում է որպէս մի հմուտ խաբէրաւ։

Մենք հաղորդեցինք գոյութեան կռիւի միայն
գլխաւոր գծերի հետադատութիւնը, թէ ինչ
պաշտօն է կատարում նա մարդկային կեանքի
մէջ։ Ներակայութիւնը, որին հասցնում է այդ

«Тифл. Вѣстн.» լրագիրը լսել է որ այս օրերս վախճանված հարուստ Աստիկ Խօջա-նի անհայտ կտակ է թիֆլիսի Գալանեան օրիորդաց դպրոցին 2000 ռուբլի:

Լսում ենք որ դիտաւորութիւն կայ հրատա-րակել թիֆլիսի մի առաջաց ամսագիր «Кавказский Вѣстник» անունով:

Այսօր, երեքշաբթի օր, երեկոյեան ժամը 8-ին թիֆլիսի Կրուժոկի դահլիճի մէջ լինելու է պ. պ. Բառէրի և Շումախերի կոնցերտը:

Մեզ լուր է հասնում որ «Փորձ» հայոց եռամսեայ հանդէսը կառավարութենից թոյլտուութիւն է ստացել այսուհետեւ ամսէ ամիս հրատարակել:

ՉԱՐԻԱԽՈՒՈՒՅՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 20-ին թիֆլիսացի առաջին գիւղիայի վաճառական պ. Գրիգոր Աղաբեգեանից շնորհակալութեամբ ստացանք «Մշակ» լրագրի համարները որպէս նուէր Գարգալիւի «Ա. Սահակեան» նորաբաց ուսումնարանին: Պարտք մտաբերել է իր հայրենի գիւղը, նուիրելով նրա աղքատիկ դպրոցին ձեր լրագիրը, որին, եթէ մենք ինքներս գրվէինք, կարող էր առանձին ծախս լինել մեր ուսումնարանի համարը»:

Թիֆլիսի մի քանի անհայտ անձինքները տեղափոխվել է իր առաջվայ տեղից Երեւանի տունը, Գօլօվիսկի պրոսպեկտի վրա: Հանդիսում ստացված են նոր նկարներ: Մենք խորհուրդ կը տայինք պ. Միրզոյեանին գոնէ չափաւոր մի անգամ կարգաւ այցելութիւններ նկարչութեան մասին թիֆլիսի դաստիարակչական ընդհանուր նկարների նշանակութիւնը և բովանդակութիւնը և ծանօթացնելով այցելող հասարակութեանը երեկոյ նկարչների կենսագրութեան հետ և առհասարակ տեղեկութիւններ տալ նկարչութեան պատմութեան մասին: Այդ տեսակի դաստիարակչութիւններ սաստիկ կը գրաւեն մեր հասարակութիւնը: Առհասարակ այցելողները արեւմտագիտական հանդէսներում դժուար թէ կարող են կատարելապէս վաշիւն արհեստը մինչև որ մի հմուտ առաջնորդ չունենան: Առհասարակ ամեն տեղ, բայց մասնաւոր մեզանում հասարակութեան մեծամասնութիւնը չքեղարուեստ ասած բանը չէ հասկանում, նրան պէտք է կրթել չքեղարուեստի ճաշակի մէջ, նկարչութիւնը ճշմարիտ վայելելու և գնահատելու գործի մէջ:

Խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ պ. Մինաս Զեքարի Կ. Պոլսում այս 1878 թ.ին հրատարակված մի փոքրիկ բրոշուր հետեւեալ վերնագրով «Թէ ինչ շահեցանք Պէրլինի վերա-ժողովէն» Այդ գրքոյի մասին մի այլ անգամ աւելի մանրամասնաբար:

Կիրակի, նոյեմբերի 5-ին Գօգֆորուս եղբայր-ների ցիրիկ մէջ առաջին ներկայացումն էր: Յիւրի շատ հարուստ է թէ ձիւններով, թէ ձի հեծնող կանանցով և թէ կառուներով: Գօգֆորուս եղբայրների ցիրիկ անկարելի է համեմատել Եւրոպի ցիրիկ հետ: Կիրակի օրը չափազանց մեծ բազմութիւն կար ներկայացմանը: Այդքան մարդիկ թողնել ցիրիկ շատ վտանգաւոր է: Յիւրի մուտքերը արձակ չեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ՄԷ:

Ա. Քիւրտերը Խաֆիզ նահանգի (գաւառի մէջ) Բրաբերդ գիւղին հովիւները լաւ մը ծեծելով՝ կապելէ վերջ 160 ոչխար՝ որոց իւրաքանչիւրը 300 զուլէն աւելի կարծեն, կառնուն կը տանին, իսկոյն գիւղացիք տեղ-ւոյն Գայմազաւմին կիմացնեն, որն որ իւր նահանգին մէջէն խումբ մը մարդ հետը առած ետեւում երթալ կը փորձէ, բայց իւր հետը գտնուածներէն շատերը թուրք լինելով՝ Հա-յուն համար օգնել չեն ուզեր, որով Գայմա-զաւմ ալ իւր անձին վտանգ մի չը բերելու համար կը տարալուի առաջադրութիւն ըստ թողուլ:

Բ. Անցեալ շաբթու սկսած, 24, գիշեր ա-տեն քանի մը գործը քաղաքիս յերեւել ըն-տանեաց միոյն տունը մտնելով 30-35000

զրուշի ոսկի կը վերցնեն շնորհիւ յոգնանա-նման խորագող ոստիկանութեան:

Գ. Անցեալ շաբթու, Քիւրտերը քաղաքէս 7 ժամ հեռու Կա միս գիւղը՝ մի 20 տա-րեկան քաղաքացիի Հայ երիտասարդէ քանի մ'աշխար էին. կուգին. իսկ երբ երիտասար-դը իրենց (Քրդաց) սոյն անիրաւ պահանջ-մանցը կընդդիմանայ, անմիջապէս հրազենու գնատակաւ մի խեղճը կը զըռեն ի կենաց. սպանողը թէ և յայտնի են, բայց կառավա-րութիւնը անտարբեր, լոկ բողոքողներ լսե-լով կը շատանայ:

Դ. Քաղաքէս 8 ժամ հեռու Տուգա-սար կոչուած Հայ գիւղը իւր շրջակայ թուրք և Քիւրդ գիւղացիներէն մերթ ընդ մերթ աւարի տրուելուն համար գիւղացիք պատրաս-տուած են իրենց նախահարց դարաւոր սեպ-հակաւթիւններ եղած արտերն ու բնակու-թիւններ ձգելով այլուր գալով: Թէ որ իրենց վերացը մի սպեղանի չը հայթայթուի. զայս թէ և առաջնորդ Ս. Հայրը հեռագրով իմացուց կուսակալին, (որ քանի մ'ամեն ի վեր գաւառին բոլոր կողմերը պոյտի- եղած է) բայց մինչև ցարդ օգուտ մի չը տեսնուեցաւ բացի ապարդիւն խոստումներէ:

Ե. Անցեալ տարի Քարտաշ Կոչուած ճանապարհին վերայ (քաղաքէս 1 1/2 ժամ հեռի) սպանեալ Սաքալեան Մկրտիչ անուն անձին հանդերձները կառավարութիւնէն ի վաճառ տրուելով՝ յիշեալին ազգականները երբ Հայ վկայներով կերթան ու կը պահանջ-նեն, կառավարութիւնը թրքաց վկայութիւ-նը ընդունելու խօսքեր կըսէ և հանդերձները չը վերադարձնէ:

Զ. Քաղաքիս Պալաք-սօզաղը անուն թա-ղին մէջ քանի մը թուրքեր գիշեր առնէ մի Հայ կնկան տան դուռը կտորելով՝ կնկան պա-տիւր կը բռնաբարեն... որ այժմ հեռանդ պատկած է: Նոյնպէս ալ մի թուրք ի մամ 7—8 տարեկան դեռահաս մի մանկական վրա իւր չար կամքը կը յագեցնէ... տղայն այժմ մահամերձ վիճակի մէջ է. իսկ օճրա-գործն անպատիւ կը պատի:

Նամակս գրած պահուս ստոյգ աղբիւրէ իմացայ, որ գաւառիս Թօն ուս նահանգի Բագրի անուն Հայ-գիւղը 35 ձիւնոր և օպառազներով Զէրեգլէ՝ երեք օր ամբողջ իբր հիւր կենայով՝ խեղճ գիւղացուց օրա-պահին առնելէ և զոման ալ գանդածէ վերջ՝ գիւղին քահանային և երեք երեւել-ներուն ձեռքերը կապելով՝ կառնուն կերթան. այժմ չը գիտցուի թէ ո՞ր մնացած և ի՞նչ եղած են Կժաղղները, զայս ևս առաջնորդ Հայրը հեռագրեց կուսակալին. բայց նայիք այս դէպքն ալ նախորդներուն նման ի մը-թութեան պիտի մնայ:

Այժմ մի Հայ քաղաքէս 1 կամ 2 ժամ հեռի տեղ մ'երթալ կը վախէ, վաճառ գն ան-պիտան թուրք գիւղականի մ'աշխի անգամ մի հաւու չափ յարդ չունի, թող թէ իբր մարդ-ընկերը: Թողուք քաղաքէս քանի մը ժամ հեռին գործուածները, նոյն իսկ քաղա-քիս մէջ այնչափ անխնայութիւնը տիրած է որ թուրքերն արձակ համարձակ ուղած-նին կատարել կը տան խեղճ Հայոց, երբեմն ծեծելով, երբեմն ալ սպառնալքներ ընելով, զայս իրենց զօստանք մ'ըրած են:

Առեւտրական և ուրիշ շահու գործոց մէջ երբ մի թուրք կը գտնուի, հոն այլ ևս Հայն գործ չունի, որովհետեւ թուրքը պո-կե ա վ ու ռ տ ի ն ի մէ, ըր գը մ ա ս է օ յ, տ ի ա ըսելով թրքաց խաժանութ ամբար իրեն օգնութեան կը կոչէ, որք կը սկսին խեղճը գանդածել մինչև որ իրենց կիւքը յագեցնայ. իսկ նոյն հետայն կը տեսնեն որ կամ խեղճին մարմնոյ մէկ կողմը կտորած է և կամ գերեզմանաւոր վիճակի մէջ կը գտ-նուի, Հայու մը վերա եթէ ցաւած են. իս-կոյն սոյն անողորմ գործողութիւնը կը կա-տարեն: Մարդ եթէ քիչ մը քննել փորձէ մէ-

կէն ի մէկ այնպէս կը կարծէ թէ տեղական կառավարութիւնը (քաղաքութիւնը մէկ կողմ թողունք) կատարուած իրողութեանց աչք զոցելով՝ իւր քրիստոնէայ հպատակները բնա-ջնջ ընելու քաղաքականութեանը կողմնակից կը գտնուի: — Ապացոյց — վաճառ, երբ մի Հայ մի թուրքի զարնէ կամ քիթը արիւնէ, իսկոյն կառավարութիւնը զայն տուգանաց կամ բանտարկութեան կը դատապարտէ. իսկ երբ մի թուրք Հայ մի ոչ թէ գանակո-ծէ կամ վերաւորէ, այլ սպաննէ անգամ, կը-կին թրքին դէմամենաչին սպառնալք մ'ալ չընէր երբեք:

Խմբագիր տէր, սոյն գրուածը միայն իրո-ղութեանց չնչին նկարագիրն լինելով եթէ անմիջական դարմաններ չը հայթայթուին ու դարձեալ շարունակեն հարստահարութիւնը և գանդը գործողներն անպատիւ մնան, այն ատեն թող գիտցած ըլլայ Պատրիարքարան՝ որ քանի մը տարիէն սոյն բազմահայ քաղա-քին մէջ միայն տապանաբարներէն պիտի ի-մացուի՝ որ ժամանակաւ հոս ալ Հայ կայ ե-ղբր:

Ուստի խմբագիր էֆ. ոյն երկտողս ձեր ազատախօս Հայրենեաց մէկ անկիւնը հիւրըն-կալելիք և Ազգ. Ընդհ. Ժողովոյ մէջ ալ ըստ ձեր երեսփոխանական պարտաւորութեան մեր կրած տառապանաց իսպառ և ընդ միշտ բառնալու ջանքերին խնդրելով:

(Հայրենիք)

ԹԻԻՐԻՔԻԱ

Լրագիրներին Կ. Պօլսից գրում են: Վա-րեւելեան Բուսնիայի գործերը կարգա-դրող մասնաժողովը վերջապէս հաւաքվե-ցաւ Ֆիլիպպոպոլում և իսկոյն ընդունեց այդ նահանգի մէջ բնակվող զանազան ազգու-թիւնների պատգամաւորներին: Առաջին նիս-տը Վերմանիայի ներկայացուցչի նախագա-հութեամբ կայացաւ հոկտեմբերի 31-ին: Այդ նիստի ընթացքում մասնաժողովի իւրա-քանչիւր անգամ բոլորներին ներկայաց-րած գանգատի մի օրինակը ստացաւ: Այդ դոկումենտը երեւի շատ կը մտածել տայ այն անձանց, որոնք կամեցան արեւելեան Բուսնի-ան անպատճառ բաժանել Բոլգարիայից:

Քանի որ գնեւալ Տօտլերներ նայում է առաստաղ զօրատեղիները Ալբանիայի և Լու-լէ Բուրգասի մէջ, նորոգում է քանդված կա-մուրջները, թիւրքաց կառավարութիւնը զե-նուորական մեծ խորհուրդ ունենալուց յետոյ պատուիրեց անպաղաճ լրացնել Չատալճիի ամրացնելը: Այնտեղ այժմ 40,000 զինուոր-ներ են աշխատում:

Այս պատրաստութիւններին նայելով գոր-ծերի դուրսիւնը շատ խաղաղական չէ: Կ. Պօլսում կան և այնպիսի անձինք, որոնք պատերազմը անփախելի են համարում:

Քաղաքագէտները հարցնում են միմեան-ցից, թէ ինչ դուրսիւն կընդունէ Աւստրի-ան, եթէ նոր խառնակութիւններ պատա-հեն: Աւստրիական դեսպան կոմս Զիլլի հոկ-տեմբերի 30-ին Բ. Դրան արած առաջար-կութիւնը ամբողջ Բօսնիան և Հերցեգովի-նայի մասը Աւստրիային զիջելու վերաբե-րութեամբ ցոյց է տալիս, որ այդ տէրութիւ-նը կամենում է հեռու մնալ գործից, եթէ թշնամական գործողութիւնները նորից սկսվեն, և ստանալ այն, որ արդէն կուով վերցրած է: Բայց Թիւրքիան հազեւ թէ կը համա-ձայնի կատարել Աւստրիայի ցանկութիւնը: Կ. Պօլսի կիսապաշտօնական լրագիրները ան-դադար յարձակվում են աւստրիական գործե-րի և նրանց հրամանատար Ֆելդմարշալ Ֆիլիպպովի վրա: Լրագիրներինց մէկը ասում է, որ այդ հրամանատարը իր զօրքերին ամենամանգութ հրամաններ է տուել՝ Հա-ղարաւոր մահաւատկաններ հրացանի են առ-նված միայն այն պատճառով, որ նրանց կա-

կածել են ապստամբների հետ յարաբերու-թիւններ ունենալու մէջ: Սպանված են միւ-շեւ անգամ անմեղ կանայք և երեխաներ: Այդ լրագիրները ուսնների մասին էլ առանձին յարգանքով չեն խօսում: Նրանցից մէկը օրե-րումս հաղորդեց, որ ուսնները Զօրուի և նրա շրջականների մէջ այրեցին և ոչնչացրին մահաւատկաններին պատկանող բոլոր տները, այնպէս որ այդ քաղաքի թիւրք փողոցների մէջ իբր թէ ոչ մի շինութիւն չէ մնացել: Կասկած չը կայ, որ բոլոր այս լուրերը սուտ են և այդ առիթով առաստաղ դեսպանը յայտա-նեց մեծ վիզիրին իր անբաւականութիւնը:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԲԱԳՈՒ. Թագոս Սարգսեան: Կամենում էք, որ այսուհետեւ ձեզ «Մշակ» Բագու ուղարկենք, իսկ առաջ ինչ տեղ էիք ստանում: Յոյս ունեւք դուք այնքան երեւել մարդ չէք, որ ձեր բնա-կութեան տեղը մեզ յայտնի լինի: Տեղափոխ-վելու ժամանակ պէտք է յայտնել հին և նոր հասցէն երբ:

—ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅ. Էլի-նա. Նամակը ան-նշան փոփոխութեամբ կը տպենք հետեւեալ հա-մարներինց մէկում:

—ԳԱՆՁԱԿ Յ. Ա. Ստացանք նամակը: Երեւի կը տպենք: Այս դէպքում կուղարկենք ձեզ 20 օրինակ:

—ՂՈՒԲԱ. Ն. Բ. Ստացանք նամակը: Ծա-րանակեցէք լուրեր հաղորդել: Ցաւում ենք, որ այդպիսի բոլորովին նամակներ չենք ստանում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 2/14 նոյեմբերի: Ֆիլիպպո-պոլի մասնաժողովը Արեւելեան Բուսնիայի վարչութեան վերաբերութեամբ ընդունեց մի կանոնադրութիւն, որ գրեթէ համապատաս-խան է Բ. Դրան նախագծին:

ՎԻԵՆԱ, 2/14 նոյեմբերի: «Polit. Cor-resp» լրագիրը հաղորդում է. «Երեւելալ Սկօբելով յայտնեց Լիւպլուրգօսի ետեւի ամ-լոցների իշխանութեանը, որ նա գնեւալ Տօտլերինց հրաման է ստացել առաջ մղել իր զօրքերը դէպի Սաղբը:

ՓԱՐԻՋ, 3/15 նոյեմբերի: Ռուսաց դեսպան Օրլով երէկ ուղևորվեցաւ Վիսթրզէն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ռ. 76 Կ., երկրորդ 95 ռ. 75 Կ., եր-րորդ 95 ռ. 50 Կ., չորրորդ 95 ռ. 50 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տու-սակը արժէ 234 ռ. 50 Կ., երկրորդ 228 ռ. 75 Կ., արեւելեան 91 ռ. 55 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23 1/3 պենս, առա-սաց 100 ռուբլ Վերմանիայի վրա արժէ 201, 50 մարկ, Փարիզի վրա 240 Ֆրանկ 50 սանտ:

Տրամադրութիւնը թող է:

ԼՕՆԴՈՆ, 4/16 նոյեմբերի: Ռուսաւորստեան դուքսը և կոմս Իրէյ գիմեյն լօրդ Բիկօնս-Ֆիլդին մի խնդրագրով պարզամեծ ժողովե-լու մասին:

ՎԻԵՆԱ, 4/16 նոյեմբերի: «Polit. Cor-resp» լրագիրը հաղորդում է, որ ապստա-մութիւնը Մակեդոնիայում աւելի մեծ զիւք է ստանում: Նա արդէն տարածվում է Թէ-սալիայում և Էպիրոսում:

ԴԱՐՄԵՏԱՊՏ, 4/16 նոյեմբերի: Հետեւին մեծ դուքսը թագաւորաւոր իշխանը և դուք-սի չորս աղջիկները ծանր հիւանդացան դիֆ-տերիայով: Փոքր աղջիկ Մարիա այսօր վախ-ձանկեցաւ:

ԼՕՆԴՈՆ, 4/16 նոյեմբերի: «Morning Post» լրագիրը ասում է, որ Անգլիան դիտաւորու-թիւն ունի Հնդկաստանի հիւսիսարեւմտեան սահմանները հետեւեալ կերպով փոփոխել. մշտական զորակով Կիւտա և Զիլարազը, Կարսը, Կանդաքարի և Հերատի մէջ բրի-տանական տեղակալներ նշանակելով:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 4/16 նոյեմբերի: Կուսեր-լինդեան դուքսը հասաւ այստեղ:

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ